

## Հայաստան Հիմնադրամի Թելեթոնը հրատապ օգնություն պիտի տրամադրէ պատերազմէն տուժած հայրենի համայնքներուն

Լոս Անճելըս, Նոյեմբեր 14, 2021 – Հայաստան Հիմնադրամի Գոհաբանութեան Օրուայ 24րդ տարեկան Միջազգային Թելեթոնը տեղի պիտի ունենայ **Նոյեմբեր 25-ին, կէսօրէ ետք ժամը 4էն մինչեւ երեկոյեան 8 (Արեւելեան Ափի ժամով՝ երեկոյեան 7էն 11)**: Դրամահաւաքին հասոյթը պիտի տրամադրուի 44օրեայ պատերազմէն տուժած Արցախի ու Հայաստանի բնակչութեան, ներառեալ տասնեակներով աւերուած համայնքներու, ինչպէս նաեւ մօտ 100,000 տեղահանուածներու ու բռնագաղթուածներու կեանքերու վերականգնման:

«Վերակառուցել հայրենիքի հեռաւոր համայնքները» նշանաբանով, այս տարուայ թելեթոնը պիտի ընդլայնէ անցեալ 12 ամիսներուն կատարուած աշխատանքը՝ համապարփակ նեցուկ ապահովելով պատերազմէն վնասուած Արցախի ու Հայաստանի բնակչութիւններուն համար: Սոյն աջակցութիւնը պիտի ընդգրկէ մարդասիրական հրատապ օգնութիւն, բնակարաններու կառուցում, բժշկական բազմապիսի օժանդակութիւն, ենթակառոցներու նորոգում ու զարգացում, ներառեալ ճամբաներու նորոգում, եւ մշակութային վերականգնումի ծրագիրներ, ներառեալ՝ տեղահանուած համայնքներու համար դպրոցաշինութիւն եւ արուեստներու դասասանդում:

«Թելեթոն 2021ը կը վերաբերի նոյնքան կազմակերպչական հաշուետուութեան ու թափանցիկութեան, որքան Արցախի ու Հայաստանի ժողովուրդի վերականգնման», յայտնեց Հայաստան Հիմնադրամի հոգաբարձութեան ատենապետ Մարիա Մեհրանեան: «Այսպէս, ցարդ իրականացուած ծրագիրներու մասին մեր նուիրատուները լիովին տեղեակ պահելու զուգահեռ, Թելեթոն 2021ը հրատապ օգնութիւն պիտի ապահովէ՝ պատերազմին պատճառով աւերուած համայնքներու եւ տուն-ու-տեղ կորսնցուցած ընտանիքներու համար»:

Թելեթոնը ուղղակիօրէն պիտի հեռարձակուի **Armeniafund.org** կայքէն՝ համաշխարհային հանդիսատեսութեան համար, եւ միաժամանակ պիտի սփռուի Հարաւային Քալիֆորնիոյ տարածքին, պատկերասփիւռի հետեւեալ կայաններէն – AABC TV, ARTN TV, Horizon Armenian TV, եւ USArmenia TV:

Թելեթոնի կամաւորներուն, հաղորդավարներուն ու անձնակազմին ապահովութեան համար, COVID-19ի վերաբերող բոլոր կանոնները պիտի գործադրուին միջոցառման ընթացքին, եւ դրամահաւաքի հեռաձայնները

պատասխանող կամաւորներու կազմը պիտի գործէ տարբեր վայրէ մը՝  
դարձեալ ապահովական նկատառումներով:

Հայաստան Հիմնադրամը 501(c)(3) կարգավիճակ ունեցող ոչ-հասութաբեր, ոչ-  
կառավարական, եւ ոչ-քաղաքական մարդասիրական կազմակերպութիւն մըն  
է:

# # #